Chamber of Commerce and Industry of Shirak
111/3 Vazgen Sargsyan st., Gyumri:
e-mail: shirakcci@gmail.com
Phone: 098048070

Chamber of Commerce and Industry of Shirak

«Մարդը Կարիքի Մեջ» ՀԿ-ն (PIN)՝ Շիրակի մարզի առևտրաարդյունաբերական պալատի (SCCI), «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն հիմնադրամի» (WINNET) և Ամասիայի քաղաքապետարանի հետ համատեղ՝ Եվրոպական Միության և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ իրականացնում են «ԵՄ-ն Շիրակի համար. Նոր աշխատատեղեր շնորհիվ բրդի արտադրության» ծրագիրը:

Ծրագրի ընդհանուր նպատակն է Շիրակի մարզում զբաղվածության և տնտեսական մրցունակության բարձրացումը, մարզի բնակչության համար կայուն աշխատատեղերի ստեղծումը և Շիրակի մարզի բրդի արժեշղթայում գործող ՓՄՁ-ների մրցունակության բարձրացումը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում անցկացվելու են դասընթացներ՝ հետևյալ ուղղություններով՝

1. Բիզնեսի և ֆինանսական հոսքերի կառավարում
2. Վաճառք և Մարքեթինգ
3. Հաշվապահական հաշվառում
4. Գնումների կառավարում

***Դասընթացներին կարող են մասնակցել միայն Զբաղվածության Պետական Գործակալության Գյումրու Զբաղվածության Տարածքային Կենտրոնում հաշվառված գործազուրկները:**

Դասընթացներին մասնակցել ցանկացողները դիմեն Զբաղվածության Պետական Գործակալության Գյումրու Զբաղվածության Տարածքային Կենտրոն մինչև **2020 թ. հունվարի 10-ը** կամ զանգահարել 098 048070 հեռախոսահամարով: